AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB PL 72-03-02
ԲԻԶՆԵՍԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 24
		Ուժի մեջ է 27/10/2017 թ.

1. Գույքով ապահովված մանրածախ բիզնես վարկեր

	Վարկատեսակ	Գույքով ապահովված մանրածախ բիզնես վարկեր		
Նպատակ	Նպատակ*	Շրջանառու և հիմնական միջոցների ձեռքբերում և/կամ այլ ներդրումներ, ինչպես նաև այլ բանկում/վարկային կազմակերպությունում գործող բիզնես վարկի տեղափոխում Ամերիաբանկ ՓԲԸ		
	ԳՀՀ «Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար» ծրագրի միջոցով ֆինանսավորվելու դեպքում	Էներգաարդյունավետ սարքավորումների և մեքենաների ձեռքբերում, ենթակառուցվածքների կառուցում և այլ նախագծեր, որոնք օգտագործում են վերականգնվող էներգիայի աղբյուրներ**		
	ԳՀՀ-ՄՓՄՁ ծրագրի միջոցով ֆինանսավորվելու դեպքում	Շրջանառու և հիմնական միջոցների ձեռքբերում և/կամ այլ ներդրումներ		
	Հաճախորդներ	Առնվազն 6 ամիս գործունեություն ծավալած իրավաբանական անձինք/անհատ ձեռնարկատերեր		
Տնտեսության ոլորտներ կամ գործունեություն, որոնց վարկեր չեն տրամադրվում	Տնտեսության ոլորտներ կամ գործունեություն, որոնց վարկեր չեն տրամադրվում	1. Այնպիսի ապրանքների արտադրություն, առևտուր կամ գործունեություն, որոնք արգելված են երկրի օրենքներով կամ միջազգային պայմանագրերով 2. Արտադրություն կամ առևտուր, որոնք կապված են զինամթերքի հետ 3. Խաղատներ և այլ շահումով խաղեր 4. Թանկարժեք քարերի առևտուր 5. Փոխանակման կետ 6. Բրոքերային և բուքմեյքերական ընկերություններ 7. Արտադրություն, օգտագործում կամ առևտուր վտանգավոր նյութերով, ինչպիսիք են ռադիոակտիվ նյութերը և այլն, բացառությամբ գյուղատնտեսության մեջ օգտագործվող թունաքիմիկատների և պարարտանյութերի:		
	ԳՀՀ-ՄՓՄՁ և «Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար» ծրագրերի միջոցով ֆինանսավորվելու դեպքում	IFC-ի բացառման ցանկ (ցանկը առկա է Հավելված 1-ում կամ http://www1.ifc.org/wps/wcm/connect/Topics_Ext_Content/IFC_External_Corporate_Site/IFC+Sustainability/Sustainability+Framework/IFC+Exclusion+List/ կայքում:)		
	Արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
	Վարկավորման նվազագույն և առավելագույն սահմանաչափ	**1մլն-150 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ**		
	ԳՀՀ-ՄՓՄՁ «Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար» և Գործարար կանանց վարկավորման ծրագրերի միջոցով ֆինանսավորվելու դեպքում	6-60 ամիս		
	Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկ	Մինչև 12 ամիս (2-3 ամիս արտոնյալ ժամկետով)		
	Ժամկետ (ամիս)	**6-36 (նաև շրջանառու միջոցների ձեռքբերման դեպքում)**		
	Տարեկան տոկոսադրույք	**Հաստատուն տոկոսադրույքով**		
		12.5%	**9.5%**	**8.0%**

Վարկի պայմաններ	Ժամկետ (ամիս)	36-60 (նաև շրջանառու միջոցների ձեռքբերման դեպքում)					
	Տարեկան տոկոսադրույք	Լողացող տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 13-րդ ամսվանից)	Հաստատուն տոկոսադրույքով	Լողացող տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 13-րդ ամսվանից)	Հաստատուն տոկոսադրույքով	Լողացող տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 13-րդ ամսվանից)	Հաստատուն տոկոսադրույքով
		Հաստատուն բաղադրիչ՝ 4.5% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)	13.5%	Հաստատուն բաղադրիչ՝ 9% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)	10.5%	Հաստատուն բաղադրիչ՝ 7.5% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)	9.0%
	Ժամկետ (ամիս)	60-120					
	Տարեկան տոկոսադրույք	Լողացող տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 37-րդ ամսվանից)		Լողացող տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 37-րդ ամսվանից)	Հաստատուն տոկոսադրույքով	Լողացող տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 37-րդ ամսվանից)	Հաստատուն տոկոսադրույքով
		Հաստատուն բաղադրիչ՝ 5.5% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)		Հաստատուն բաղադրիչ՝ 10% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)	11.5%	Հաստատուն բաղադրիչ՝ 8.5% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)	10.0%
	Տոկոսադրույքի հետ կապված այլ պայմաններ	Դրամական միջոցներով կամ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերով ապահովված վարկերի դեպքում տոկոսադրույքը սահմանվում է. - վարկի և գրավի նույն արժույթով լինելու դեպքում՝ գործող ավանդի/պարտատոմսի տոկոսադրույք + 4%, բայց ոչ ավելի քան վերոնշյալ տոկոսադրույքները, -վարկի և գրավի տարբեր արժույթով լինելու դեպքում՝ վերոնշյալ տոկոսադրույքները:					
		Հաճախորդի ցանկությամբ գույքի Ապահովագրությունը Բանկի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը ավելացվում է Բանկի կողմից սահմանված հետևյալ վերադրի չափով. անշարժ գույք՝ 0.2%, ավտոտրանսպորտային միջոց՝ 2.5%, հիմնական միջոց՝ 0.5%:					
		Շեղումների դեպքում տոկոսադրույքը սահմանվում է առնվազն +0.5%					
	ԳՀՀ-ՄՓՄՁ ծրագրի միջոցով ֆինանսավորվելու դեպքում	ՀՀ դրամով վարկի տարեկան տոկոսադրույքը սահմանվում է **12.5%**					
	ԳՀՀ «Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար» ծրագրի միջոցով ֆինանսավորվելու դեպքում	**ՀՀ դրամով վարկի տարեկան տոկոսադրույքը սահմանվում է 11.9%**, այլ շեղումների դեպքում տոկոսադրույքը փոփոխման ենթակա չէ					
	Գործարար կանանց վարկավորման ծրագիր (EBRD)	**ՀՀ դրամով վարկի տարեկան տոկոսադրույքը սահմանվում է 14%**, այլ շեղումների դեպքում տոկոսադրույքը սահմանվում է առնվազն +1%					
	Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկեր	ՀՀ դրամ՝ 12% (սուբսիդավորման հնարավորությամբ)					
	Վարկի տրամադրման վճար	Վարկի գումարի 1%, նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ (չի տարածվում գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկի վրա)					

	ԳՀՀ-ՄՓՄԶ և ԳՀՀ «Էներգաարդյունավետություն ՓՄԶ-ների համար» ծրագրերի միջոցով ֆինանսավորվելու դեպքում	Վարկի գումարի մինչև **1.5%**
	Վարկի գումարի կանխիկացում	Չի կիրառվում
Վարկի մարման եղանակներ	Մարման եղանակ	Անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ):
		Դիֆերենցված (Նվազող) (վարկի գումարը վճարվում է հավասարաչափ, տոկոսագումարը նվազում է՝ հաշվարկվելով մնացորդի նկատմամբ, վարկի գումարի և տոկոսագումարի մարումները կատարվում են ամսական պարբերականությամբ) Մարման եղանակի այս տարբերակն ընտրելու դեպքում տարեկան տոկոսադրույքը սահմանվում է **առնվազն +0.5%:**
		Խառը (հաճախորդը հնարավորություն ունի ընտրել մարումների նախընտրելի ժամանակացույց, որի հիմքում ընկած կլինի բիզնեսի ֆինանսական հոսքերի դինամիկան, սակայն 1 տարվա ընթացքում վճարվող ընդհանուր մայր գումարը պետք է կազմի վարկի պայմանագրային գումարի առնվազն 15%-ը, տոկոսագումարը վճարվում է ամսական պարբերականությամբ) Մարման եղանակի այս տարբերակն ընտրելու դեպքում տարեկան տոկոսադրույքը սահմանվում է **առնվազն +1%:**
Ապահովվածություն	Գրավադրվող գույքի նկարագրություն	Գրավի առարկա կարող է հանդիսանալ Բանկի համար ընդունելի անշարժ գույք, տրանսպորտային միջոց, հիմնական միջոց, ոսկով մետաղական հաշիվներ, դրամական միջոցներ, Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր:
	Վարկ/գրավ հարաբերակցություն (որպես արժեք հիմք է ընդունվում լիկվիդային արժեքը)	Վարկի ապահովություն հանդիսացող գրավի առարկաների արժեքը ներառվում է Վարկ/Գրավ հարաբերակցության հաշվարկում հետևյալ առավելագույն սահմանաչափերով ըստ յուրաքանչյուր գրավատեսակի. 1. անշարժ գույք՝ 70%, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ 80% 1.1. Գործարար կանանց վարկավորման ծրագրի շրջանակներում՝ 100% 2. տրանսպորտային միջոց՝ 50% 3. հիմնական միջոց՝ 40%, բայց ոչ ավելի քան ընդհանուր գրավի մեջ 30%-ը 4. ոսկու առարկայազուրկ մետաղական հաշիվ Ամերիաբանկում՝ 80% 5. դրամական միջոց Ամերիաբանկում/ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր, որից. -նույն արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր՝ 90% -այլ արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր՝ 70%
	Գրավադրվող տրանսպորտային միջոցի տարեթիվը	Արտասահմանյան արտադրության տրանսպորտային միջոցի արտադրության ժամկետը սահմանվում է առավելագույնը 12 տարի՝ բացառությամբ ռուսական, չինական և պարսկական արտադրության տրանսպորտային միջոցների, որոնց դեպքում արտադրության ժամկետը սահմանվում է առավելագույնը 8 տարի
	Գրավադրվող անշարժ գույքի գտնվելու վայրը	ՀՀ/ԼՂՀ
	ԳՀՀ-ՄՓՄԶ և «Էներգաարդյունավետություն ՓՄԶ-ների համար» և Գործարար կանանց ծրագրերի միջոցով ֆինանսավորվելու դեպքում	ՀՀ
	Գույքի գնահատում	Գրավի առարկայի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից:
	Լրացուցիչ ապահովում	Բիզնեսի հիմնադիրների/իրական շահառուների անձնական երաշխավորությունների առկայությունը պարտադիր է, ինչպես նաև որպես լրացուցիչ ապահովում՝ Բանկը կարող է պահանջել նաև այլ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն:

Գրավադրվող գույքի ապահովագրություն	Գույքի ապահովագրություն	Գրավադրվող անշարժ գույքի ապահովագրությունն իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում միայն այն դեպքում, եթե օգտագործվում/օգտագործվելու է ձեռնարկատիրական գործունեության նպատակով. 1. Հաճախորդի կողմից՝ առնվազն վարկի մնացորդի չափով 2. Բանկի կողմից՝ վարկի մնացորդի չափով
		Գրավադրվող տրանսպորտային և հիմնական միջոցների ապահովագրությունն իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում. 1. Հաճախորդի կողմից՝ առնվազն վարկի մնացորդի չափով 2. Բանկի կողմից՝ վարկի մնացորդի չափով: Ապահովագրության ենթակա չեն հետևյալ տրանսպորտային միջոցները. • Ավտոմեքենաներ, որոնք կրում են վտանգ սպառնացող ապրանքներ՝ տոքսիկ նյութեր, քիմիկատներ, ռադիոակտիվ և պայթյունավտանգ նյութեր • Ավտոմեքենաներ, որոնք կմասնակցեն մրցույթներին, փորձարկումներին կամ ունեն երեք անիվ, ձնեմաքրող մեքենաներ, մոտոցիկլետներ, հատուկ տեխնիկա հանդիսացող մեքենաներ • Տաքսի ծառայության և վարձով տրվող ավտոմեքենաներ:
	ԳՀՀ-ՄՓՄՁ և «Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար» ծրագրերի միջոցով ֆինանսավորվելու դեպքում	Վերոնշյալ ապահովագրությունն իրականացվում է միայն հաճախորդի կողմից
Վարկի սպասարկման սակագներ***	Վարկի պայմանների փոփոխություն	25,000 ՀՀ դրամ
	Անշարժ գույք գրավի առարկայի փոփոխություն (այդ թվում գրավի սեփականատիրոջ փոփոխություն)	20,000 ՀՀ դրամ
	Տրանսպորտային միջոցի գրավի փոփոխություն (այդ թվում գրավի սեփականատիրոջ փոփոխության համար)	10,000 ՀՀ դրամ
	Գրավի առարկայի հետ կապված համաձայնությունների, թույլտվությունների/տեղեկանքների տրամադրում	10,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
	Վարկի մարման օրվա փոփոխություն	10,000 ՀՀ դրամ
		Վարկային հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր
		Վարկի հայտ-դիմում
		Անձնագրեր (բնօրինակը) /Ա/Ձ-ի դեպքում/
		Հարկային կոդ, պետ. ռեգիստրի վկայական (Իրավաբանական անձի դեպքում գործադիր մարմնի վերաբերյալ ներդիրը պարտադիր է)
		Կանոնադրություն (Իրավաբանական անձի դեպքում)
		Իրավ. անձի մասնակիցների, տնօրենի/նախագահի անձնագրերի և սոց. քարտերի պատճենները
		Նախնական հաստատումից հետո պահանջվող փաստաթղթեր
		Վարկառուի և իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց կամ Ա/Ձ-ների պետական գրանցման վկայականների և կից ներդիրների պատճենները
		Ֆինանսական հաշվետվությունները վերջին հաշվետու ժամանակահատվածի համար՝ հաստատված հարկային տեսչության կողմից

Պահանջվող փաստաթղթեր	Պահանջվող փաստաթղթեր	Վերջին հաշվետու տարվա համար (հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններ ներկայացնողների համար), վերջին հաշվետու եռամսյակի համար հաստատագրված և/կամ պարզեցված հարկ վճարողների համար
		Գործունեության իրականացման վայրի նկատմամբ սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենը
		Իրացման, մատակարարման պայմանագրեր, հայտ-պատվերներ, հաշիվ ապրանքագրեր, վաճառքների կանոնավոր գործընթաց հաստատող այլ փաստաթղթեր
		Գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ լիցենզիաների, սերտիֆիկատների և պահանջվող այլ փաստաթղթերի պատճենները
		Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ և/կամ շարժական գույք) սեփականությունը հաստատող փաստաթղթեր
		Գրավադրվող հողատարածքի գեոդեզիական չափագրում
		Նախնական Հաշվետվություն՝ անշարժ գույքի/ տրանսպորտային միջոցի գնահատման վերաբերյալ
		Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր
		Անշարժ գույքի սեփականության իրավունքի հիմքերի պատճենները, ներկայացվում են ըստ պահանջի
		Հարկային պետական ծառայությունից տեղեկանքներ պարտք ու պահանջի վերաբերյալ
		Գրավադրվող գույքի սեփականատերերի անձնագրերը (կնոջ/ամուսնու), մահվան վկայականի պատճենները
		Անշարժ գույքի սեփականության իրավունքի հիմքերը
		Ամուսնության (ամուսնալուծության, (կնոջ/ամուսնու) մահվան) վկայականի պատճենը
		Տեղեկանք Անշարժ գույքի Կադաստրի պետական կոմիտեից՝ գույքի պարտավորություններով ծանրաբեռնվածության վերաբերյալ (Միասնական տեղեկանք)
		Տեղեկանք Ոստիկանությունից տրանսպորտային միջոցի սահմանափակումների վերաբերյալ
		Հիմնական Հաշվետվություն՝ գրավադրվող գույքի գնահատման վերաբերյալ
		Անշարժ գույքի/Տրանսպորտային միջոցի ապահովագրության պայմանագիր ըստ անհրաժեշտության
		Իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը՝ բանկից վարկի և դրա ապահովման համար առաջարկվող ապահովման միջոցի վերաբերյալ գործարքներ կնքելու մասին
		Տեղեկանք գրանցված բաժնետերերի/մասնակիցների/հիմնադիրների, տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ (Իրավաբանական անձի դեպքում)
		Գործունեության հետ կապված ՀՀ օրենսդրական ակտերով և/կամ բանկի (ռիսկային բնապահպանական գործունեության դեպքում) կողմից պահանջվող բնապահպանական՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության, տեխնիկական անվտանգության և այլ փորձաքննարկան եզրակացություններ, ակտեր; տեխնիկատնտեսական հիմնավորումներ (ըստ անհրաժեշտության)
		Այլ փաստաթղթեր՝ Բանկի մասնագետի պահանջով
Այլ վճարներ	Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ	1. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրվող միասնական տեղեկանքի համար սահմանված վճար, ՀՀ ՃՈ Տրանսպորտային միջոցի օտարման նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքի համար սահմանված վճար 2. Գրավի առարկա հանդիսացող անշարժ գույքի նոտարական վավերացման և Գրավի պայմանագրից ծագող Բանկի իրավունքի պետական գրանցման վճար իրավասու մարմնում, Տրանսպորտային միջոցի գրավի իրավունքի գրանցման վկայականի համար սահմանված վճար

	ԳՀՀ-ՄՓՄԶ ծրագրի միջոցով ֆինանսավորվելու դեպքում	Այն դեպքում, երբ ներդրումների արժեքը գերազանցում է 80 մլն ՀՀ դրամը, էներգաաուդիտի վճարի 60% իրականացվում է հաճախորդի կողմից
	Վարկի վաղաժամկետ մարման տուգանք	Վարկի ժամկետի առաջին 3 տարվա ընթացքում է կիրառվում է վաղաժամկետ մարման տուգանք՝ ժամկետից շուտ վճարած գումարի **5%-ի** չափով: Վաղաժամկետ մարման տուգանք չկիրառելու դեպքում սահմանվում է ավելի բարձր տոկոսադրույք՝ **+2%: (չի տարածվում գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկի վրա)**
Տույժեր և տուգանքներ	Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ	Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը: Տույժ՝ ժամկետանց Վարկի 0.15 %-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ 5 աշխատանքային օր ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ նաև տուգանք՝ ժամկետանց Վարկի 2.0 %-ի չափով:
		Տույժ՝ ժամկետանց տոկոսագումարի 0.3%-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ 5 աշխատանքային օր ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ նաև տուգանք՝ ժամկետանց տոկոսագումարի 5.0 %-ի չափով:

*Եթե ի սկզբանե այլ ժամկետ սահմանված չէ վարկային պայմանագրով, վարկի նպատակային օգտագործումը կարող է իրականացվել առավելագույնը 3 ամսվա ընթացում, իսկ փուլային տրամադրվող վարկերի դեպքում՝ յուրաքանչյուր փուլի գումարը տրամադրվում է նախորդ փուլից հետո առավելագույնը 3 ամսվա ընթացքում՝ վերջինիս նպատակայնությունը ստուգելուց հետո:

**Նշված էներգաարդյունավետ ներդրումները և նրանց հետ կապված աշխատանքների ընդհանուր արժեքը պետք է կազմի նվազագույնը վարկի գումարի 70%-ը: Մինչև 30% կարող են կազմել այլ ներդրումներ վարկառուի հիմնական միջոցներում:

***Սակագինը կիրառվում է հաճախորդի նախաձեռնությամբ փոփոխությունների իրականացման դեպքում: Եթե 1 փոփոխության արդյունքում գանձման ենթակա է մի քանի սակագին, ապա գանձվում է ամենաբարձր սակագինը՝ 1 անգամ: Սակագները կիրառելի չեն դրամական միջոցների, պարտատոմսերի, առարկայազուրկ մետաղական հաշիների գրավով վարկերի համար: Եթե փոփոխությունների շրջանակներում իրականացվում է նոր գրավի ավելացում կամ երաշխավորի ավելացում, ապա սակագինը չի գանձվում: Սակագները չեն տարածվում գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի վրա:

IFC-ի բացառման ցուցակ

Որևէ ապրանք կամ գործունեություն, որի արտադրությունը կամ առևտուրը արգելված է երկրի օրենքներով կամ միջազգային կոնվենցիաներով և պայմանագրերով, կամ հանդիսանում են միջազգային արգելքի առարկա, ինչպիսիք են դեղորայք, պեստիցիդ/հերբիցիդներ, օզոնային շերտը վնասող միջոցներ, PCB, վայրի բնության կամ CITES-ի կողմից կարգավորվող առարկաներ:

Զինամթերքի արտադրությունը կամ վաճառքը[1]

Ալկոհոլային խմիչքների (բացառությամբ գարեջրի և գինու) արտադրանքը կամ վաճառքը

Ծխախոտի արտադրությունը կամ վաճառքը

Խաղատները, մոլի խաղերը և նմանատիպ գործունեությունները

Ռադիոակտիվ մետաղների արտադրությունը կամ վաճառքը: Սա չի վերաբերվում բժշկական նշանակություն ունեցող սարքավորումների, որակի ստուգման սարքավորումների և այլ սարքավորումների, որտեղ Միջազգային ֆինանսական կոռպորացիան ռադիոակտիվ աղբյուրը դիտարկում է սովորական և/կամ բավականաչափ ապահով:

Չկապակցված ասբեստ հանգույցների արտադրությունը և վաճառքը: Սա չի վերաբերում ասբեստ կապակցված ցեմենտին, որտեղ ասբեստի պարունակությունը 20%-ից քիչ է:

Ցանցային ձկնորսություն ջրային մակերեսում, որտեղ ցանցի երկարությունը 2,5 կմ-ից ավել է:

Նպատակահարմարության թեստ կկիրառվի, երբ տվյալ ծրագրի գործառույթները կունենան զարգացման նշանակալի ազդեցություն, բայց երկրի իրավիճակը կպահանջի փոփոխություններ Բացառությունների ցանկին:

Բոլոր **ֆինանասական միջնորդները** բացի ներքոշյալներից պետք է կիրառեն հետևյալ բացառությունները, ի հավելումն Բացառությունների ցանկին.

Վնասակար կամ շահագործվող ստիպողական աշխատանք[2]/ երեխաների վնասակար աշխատանք[3]

Մեծածավալ անտառահատում օգտագործման համար առաջնահերթ տրոպիկական խոնավ անտառում

Փայտի և ստեղծված կենսունակ անտառներից տարբեր այլ անտառային նյութերի արտադրություն կամ վաճառք

Միկրոֆինանսական գործունեության մեջ ներդրումներ կատարելիս ֆինանսական կազմակերպությունները ի հավելումն բացառությունների ցուցակին կկիրառեն հետևյալը

Վնասակար կամ շահագործող ստիպողական աշխատանք/ երեխաների վնասակար աշխատանք

Նշանակալի վնասակար քիմիկատների օգտագործումը,արտադրությունը,վաճառքը,պահպանումը կամ տեղափոխումը: վտանգավոր քիմիկատներից են գազօլինը,կերասինը և այլ նավթամթերք:

առանց ամբողջական փաստաթղթավորված համաձայնության բնիկ մարդկանց կատարած արտադրանքը կամ գործունեությունը ներխուժլով սեփականաշնորհված կամ դատարանի որոշմամբ առարկված հողեր:

Վաճառքի ֆինանասավորման ծրագրերի դեպքում, կախված գործարքի բնույթից, ֆինանասական կազմակերպությունները կկիրառեն հետևյալ բացառությունները, ի հավելում Բացարությունների ցանկին.

Վնասակար կամ շահագործող ստիպողական աշխատանք/ երեխաների վնասակար աշխատանք

[1] Սա չի վերաբերում հովանավորներին, ովքեր մեծ մասամբ ընդգրկված չեն գործունեության մեջ: «Մեծ մասամբ չեն ընդգրկում» նշանակում է, որ կատարվող գործողությունները հավելում են ծրագրի հովանավորների առաջնահերթ գործունեությանը:

[2] Ստիպողական աշխատանքը այն աշխատանքն ու ծառայությունն է, որը կամովի չի կատարվում,այլ կատարվում է ուժի և պատժման վախի տակ:

[3] Երեխայի վնասակար աշխատանքը ենթադրում է երեխաների աշխատանք,որը տնտեսականորեն շահագործվում է, հնարաոր է լինի ռիսկային, վտանգավոր, կամ զուգակցել երեխայի կրթությանը,կամ վնասել երեխայի առողջությանը,կամ ֆիզիկական,մտածողական,հոգեկան,բարոյական կամ սոցիալական զարգացնմանը: